

Կ-1116-30.06.2025-SՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 27-րդ հոդվածի 6-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2 Օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից վարձած աշխատողներին Հայաստանի Հանրապետության տարածքում կատարվող աշխատանքների և (կամ) մատուցվող ծառայությունների դիմաց վճարվող եկամուտները, եթե վճարվող եկամուտները ոչ ռեզիդենտ կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատության համար համարվում են ծախս, անկախ այդ ծախսը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից, և (կամ) ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից վարձած աշխատողները ներգավված են մշտական հաստատության գործունեության մեջ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային գործակալները պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանին վերաբերող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափով հաշվարկված եկամտային հարկի գումարները:»:

Հոդված 4. Օրենսգրքի 155-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենսգիրք 314-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ

«Հոդված 314. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքի տրամադրումը

1. Հարկային մարմինը հաստատում է կազմակերպությունների և ֆիզիկական անձանց Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակը՝ էլեկտրոնային եղանակով տրամադրելով հարկային մարմնի հաստատած ձևին համապատասխան Հայաստանի

Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանք և (կամ) էլեկտրոնային եղանակով հաստատելով օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտության փաստը հաստատող տեղեկանքի ձևը: Օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ռեզիդենտության տեղեկանքը համարվում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտության փաստը հաստատող տեղեկանք, եթե այն բովանդակային առումով համապատասխանում է հարկային մարմնի սահմանած՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքի բովանդակությանը:

2 Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատման նպատակով հարկ վճարողը էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում հարկային մարմնի հաստատած ձևին համապատասխան Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատման մասին դիմում, որը ներառում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձանց դեպքում՝

ա հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, կազմակերպարավական տեսակը, անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը

բ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատման տարեթիվը

գ երկիրը, որտեղ պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը

դ անհրաժեշտության դեպքում օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ռեզիդենտության տեղեկանքի ձևը հաստատելու նշում՝ կցելով օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ռեզիդենտության տեղեկանքի ձևը:

2) ֆիզիկական անձանց դեպքում (բացառությամբ սույն մասի 1-ին կետով սահմանված դեպքի)՝

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն

բ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատման տարեթիվը

գ երկրի անվանումը, որտեղ պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը

դ. հարկային տարում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 183 և ավելի օր ֆիզիկական անձի գտնվելու ժամանակահատվածի կամ Հայաստանի Հանրապետության տարածքում կենսական շահերի կենտրոնի գտնվելու մասին նշում՝ կցելով կենսական շահերի կենտրոնի մասին ազատ ոճով շարադրած հիմնավորումը և հաստատող փաստաթղթերի պատճենները.

ե. անհրաժեշտության դեպքում օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ռեզիդենտության տեղեկանքի ձևը հաստատելու նշում՝ կցելով օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ռեզիդենտության տեղեկանքի ձևը:

3. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը տրամադրվում է էլեկտրոնային եղանակով՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված

դեպքերում դիմումը ներկայացնելուց անմիջապես հետո, իսկ սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշված դեպքում դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում: Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատման դիմումը մերժելու դեպքում դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացվում է մերժման ծանուցում՝ նշելով պատճառը: Օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ռեզիդենտության փաստը հաստատող տեղեկանքի ձևը հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը էլեկտրոնային եղանակով հաստատում է այն, իսկ մերժման դեպքում ներկայացնում է մերժման ծանուցում՝ նշելով պատճառը:

4 Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատման դիմումը մերժվում է, եթե չի ներկայացվել սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ռեզիդենտության հաստատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը և (կամ) փաստաթղթերը:

5 Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը ներառում է հետևյալ տեղեկատվությունը

1) հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, կազմակերպարարական տեսակը, ֆիզիկական անձի անուն, ազգանունը, անձնագրային տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը.

2) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատման տարեթիվը.

3) երկրի անվանումը, որտեղ պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը.

4) նշում Հայաստանի Հանրապետության և տեղեկանքի ներկայացման երկրի միջև գործող՝ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրի (կոնվենցիայի) կիրառումն ապահովելու նպատակով, եթե ռեզիդենտության հաստատման տարում նման համաձայնագիր (կոնվենցիա) առկա է #

5) համակարգի կողմից գեներացվող համապատասխան հսկիչ ծածկագիր և QR կոդ:

6. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատումը կարող է իրականացվել ինչպես ընթացիկ, այնպես էլ նախորդ հարկային տարիների համար, եթե առկա է նախորդ հարկային տարիների ռեզիդենտությունը հաստատող անհրաժեշտ տեղեկատվությունը: Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը ըստ տարիների և երկրների տրամադրվում է առանձին:

7. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը տրամադրվում է հայերեն, իսկ հարկ վճարողի կողմից պահանջվելու դեպքում՝ նաև անգլերեն և ռուսերեն:»:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

2 Սույն օրենքի 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածները տարածվում են այն դեպքերի վրա, երբ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքով

սահմանված ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2025 թվականի սեպտեմբերի 1-ն է կամ դրանից հետո:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածը տարածվում է 2025 թվականի դեկտեմբերի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների տրամադրման գործընթացի վրա: Մինչև 2025 թվականի դեկտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների տրամադրման մասով կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Օրենսգրքով սահմանված կարգավորումները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ****ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 27-րդ հոդվածի 6-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2 Օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից վարձած աշխատողներին Հայաստանի Հանրապետության տարածքում կատարվող աշխատանքների և (կամ) մատուցվող ծառայությունների դիմաց վճարվող եկամուտները, եթե վճարվող եկամուտները ոչ ռեզիդենտ կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատության համար համարվում են ծախս, անկախ այդ ծախսը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից, և (կամ) ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից վարձած աշխատողները ներգավված են մշտական հաստատության գործունեության մեջ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային գործակալները պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանին վերաբերող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափով հաշվարկված եկամտային հարկի գումարները:»:

Հոդված 34. Օրենսգրքի 155-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 45. Օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 56. Օրենսգիրք 314-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ

« Հոդված 314. Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքի տրամադրումը

1. Հարկային մարմինը հաստատում է կազմակերպությունների և ֆիզիկական անձանց Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտի կարգավիճակը՝ էլեկտրոնային եղանակով տրամադրելով հարկային մարմնի հաստատած ձևին համապատասխան

Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~ ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանք կամ և (կամ) էլեկտրոնային եղանակով հաստատելով օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտության փաստը հաստատող տեղեկանքի ձևը: Օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ռեզիդենտության տեղեկանքը համարվում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտության փաստը հաստատող տեղեկանք, եթե այն բովանդակային առումով համապատասխանում է հարկային մարմնի սահմանած՝ Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~ ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքի բովանդակությանը:

2 Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~ ռեզիդենտի կարգավիճակի հաստատման նպատակով հարկ վճարողը էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում հարկային մարմնի հաստատած ձևին համապատասխան Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~ ռեզիդենտի կարգավիճակի հաստատման մասին դիմում, որը ներառում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձանց դեպքում՝

ա հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, կազմակերպատիրական տեսակը, անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը

բ Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~ ռեզիդենտի կարգավիճակի հաստատման տարեթիվը

գ երկիրը, որտեղ պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~ ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը

դ անհրաժեշտության դեպքում օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ռեզիդենտության տեղեկանքի ձևը հաստատելու նշում՝ կցելով օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ռեզիդենտության տեղեկանքի ձևը:

2) ֆիզիկական անձանց դեպքում (բացառությամբ սույն մասի 1-ին կետով սահմանված դեպքի)՝

ա. ~~հարկ վճարողի հաշվառման համարը~~, անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն

բ Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~ ռեզիդենտի կարգավիճակի հաստատման տարեթիվը

գ երկրի անվանումը, որտեղ պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~ ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը

դ. հարկային տարում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 183 և ավելի օր ֆիզիկական անձի գտնվելու ժամանակահատվածի կամ Հայաստանի Հանրապետության տարածքում կենսական շահերի կենտրոնի գտնվելու մասին նշում՝ կցելով կենսական շահերի կենտրոնի մասին ազատ ոճով շարադրած հիմնավորումը և հաստատող փաստաթղթերի պատճենները,

ե. անհրաժեշտության դեպքում օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ռեզիդենտության տեղեկանքի ձևը հաստատելու նշում՝ կցելով օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ռեզիդենտության տեղեկանքի ձևը:

3. Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~ ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը տրամադրվում է էլեկտրոնային եղանակով՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում

նշված դեպքերում դիմումը ներկայացնելուց անմիջապես հետո, իսկ սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշված դեպքում դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում: Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~-ռեզիդենտի կարգավիճակի հաստատման դիմումը մերժելու դեպքում դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացվում է մերժման ծանուցում՝ նշելով պատճառը: Օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ռեզիդենտության փաստը հաստատող տեղեկանքի ձևը հարկային մարմինը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը էլեկտրոնային եղանակով հաստատում է այն, իսկ մերժման դեպքում ներկայացնում է մերժման ծանուցում՝ նշելով պատճառը:

4 Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~-ռեզիդենտի կարգավիճակի հաստատման դիմումը մերժվում է, եթե չի ներկայացվել սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ռեզիդենտության հաստատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը և (կամ) փաստաթղթերը:

5 Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~-ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը ներառում է հետևյալ տեղեկատվությունը

1) հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, կազմակերպարարական տեսակը, ֆիզիկական անձի անուն, ազգանունը, անձնագրային տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, ~~բնակության կամ հաշվառման վայրի հասցեն~~.

2) Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~-ռեզիդենտի կարգավիճակի հաստատման տարեթիվը.

3) երկրի անվանումը, որտեղ պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~-ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը.

4) նշում Հայաստանի Հանրապետության և տեղեկանքի ներկայացման երկրի միջև գործող՝ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրի (կոնվենցիայի) ~~կիրառման կիրառումն ապահովելու~~ նպատակով, եթե ռեզիդենտության հաստատման տարում նման համաձայնագիր (կոնվենցիա) առկա է

5) համակարգի կողմից գեներացվող համապատասխան հսկիչ ծածկագիր և ծածկագիր պարունակող QR կոդ:

6. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատումը կարող է իրականացվել ինչպես ընթացիկ, այնպես էլ նախորդ հարկային տարիների համար, եթե առկա է նախորդ հարկային տարիների ռեզիդենտությունը հաստատող անհրաժեշտ տեղեկատվությունը: Հայաստանի Հանրապետության ~~հարկային~~-ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը ըստ տարիների և երկրների տրամադրվում է առանձին:

7. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը տրամադրվում է հայերեն, իսկ հարկ վճարողի կողմից պահանջվելու դեպքում՝ նաև անգլերեն և ռուսերեն:»:

Հոդված 67. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից, ~~եթե սույն հոդվածով այլ բան նախատեսված չէ:~~

2 Սույն օրենքի ~~3-րդ և 4-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ~~ հոդվածները տարածվում են այն դեպքերի վրա, երբ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2025 թվականի սեպտեմբերի 1-ն է կամ դրանից հետո:

~~3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ռեզիդենտության հաստատման հետ կապված կարգավորումները տարածվում են 2025 թվականի հուլիսի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների տրամադրման գործընթացի վրա, իսկ ֆիզիկական անձանց ռեզիդենտության հաստատման հետ կապված կարգավորումները տարածվում են 2026 թվականի հունվարի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների տրամադրման գործընթացի վրա: Մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ֆիզիկական անձանց Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների տրամադրման մասով կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Օրենսգրքով սահմանված կարգավորումները:~~

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածը տարածվում է 2025 թվականի դեկտեմբերի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների տրամադրման գործընթացի վրա: Մինչև 2025 թվականի դեկտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների տրամադրման մասով կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Օրենսգրքով սահմանված կարգավորումները:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1116-30.06.2025-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Nº	Առաջարկությա ն (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությ ունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությ ուններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողով ի որոշումը
1.	Կառավարություն	լրացվող 3-րդ հոդված	Առաջարկվում է Նախագիծը լրացնել 3-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 3. Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային գործակալները պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանին վերաբերող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափով հաշվարկված եկամտային հարկի գումարները:»: Քանի որ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքով սահմանված ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2025թ. սեպտեմբերի 1-ին կամ դրանից հետո լինելու դեպքում ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստները վճարվելու են Միասնական սոցիալական ծառայության կողմից, ուստի	<i>Ընդունվել է:</i> Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	<i>Ընդունվել է:</i>

			Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրելու անհրաժեշտություն է առաջացել: Միաժամանակ, նշված հոդվածի լրացմամբ պայմանավորված փոխվում է նաև հոդվածների հաջորդականությունը: #		
2.	Կառավարություն	5-րդ (փոփոխված 6-րդ) հոդված	Առաջարկվում է նախագծի 5-րդ (փոփոխված 6-րդ) հոդվածով Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 314-րդ հոդվածում՝ «Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտ» բառերը համապատասխան հոլովածներով փոխարինել «Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ» բառերով: Առաջարկը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով և այն հանգամանքով, որ Օրենսգրքում կիրառվում է «Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ» հասկացությունը:	<i>Ընդունվել է:</i> Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	<i>Ընդունվել է:</i>
3.	Կառավարություն	5-րդ (փոփոխված 6-րդ) հոդված	Առաջարկվում է նախագծի 5-րդ (փոփոխված 6-րդ) հոդվածով Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 314-րդ հոդվածի 1-ին մասում «կամ» բառը փոխարինել «և (կամ)» բառերով: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտության փաստը հաստատող տեղեկանքի ձևը հաստատելու պահանջի դեպքում միաժամանակ հարկ վճարողին տրամադրվելու է հարկային մարմնի հաստատած ձևին համապատասխան Հայաստանի	<i>Ընդունվել է:</i> Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	<i>Ընդունվել է:</i>

			Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանք:		
4.	Կառավարություն	5-րդ (փոփոխված 6-րդ) հոդված	Առաջարկվում է նախագծի 5-րդ (փոփոխված 6-րդ) հոդվածով Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 314-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետում «անունը» բառից առաջ լրացնել «հարկ վճարողի հաշվառման համարը,» բառերը: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ ֆիզիկական անձիք ՀՀ ռեզիդենտի կարգավիճակի հաստատման նպատակով էլեկտրոնային եղանակով դիմում կարող են ներկայացնել միայն հարկ վճարողի հաշվառման համարի առակայության դեպքում:	<i>Ընդունվել է:</i> Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	<i>Ընդունվել է:</i>
5.	Կառավարություն	5-րդ (փոփոխված 6-րդ) հոդված	Առաջարկվում է նախագծի 5-րդ (փոփոխված 6-րդ) հոդվածով Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 314-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետից հանել «, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն» բառերը: Առաջարկը պայմանավորված է բնակության կամ հաշվառման վայրի հասցեն հարկ վճարողի կողմից անգլերեն կամ ռուսերեն լեզուներով ճշգրիտ լրացման հետ կապված խնդիրներով:	<i>Ընդունվել է:</i> Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	<i>Ընդունվել է:</i>
6.	Կառավարություն	5-րդ (փոփոխված 6-րդ) հոդված	Առաջարկվում է նախագծի 5-րդ (փոփոխված 6-րդ) հոդվածով Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 314-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետում «համաձայնագրի կիրառման նպատակով, եթե նման համաձայնագիր առկա է» բառերը փոխարինել «համաձայնագրի (կոնվենցիայի) կիրառումն	<i>Ընդունվել է:</i> Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	<i>Ընդունվել է:</i>

			ապահովելու նպատակով, եթե ռեզիդենտության հաստատման տարում նման համաձայնագիր (կոնվենցիա) առկա է» բառերով: Առաջարկը խմբագրական բնույթ է կրում:		
7.	Կառավարություն	5-րդ (փոփոխված 6-րդ) հոդված	Առաջարկվում է նախագծի 5-րդ (փոփոխված 6-րդ) հոդվածով Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 314-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետում «ծածկագիր» բառից առաջ լրացնել «հսկիչ» բառը, իսկ «QR»-ից առաջ հանել «ծածկագիր պարունակող» բառերը: Առաջարկը խմբագրական բնույթ է կրում:	<i>Ընդունվել է:</i> Նախագծում կատարվել է համապատասխան լրացում և փոփոխություն:	<i>Ընդունվել է:</i>
8.	Կառավարություն	5-րդ (փոփոխված 6-րդ) հոդված	Առաջարկվում է նախագծի 5-րդ (փոփոխված 6-րդ) հոդվածով Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 314-րդ հոդվածը լրացնել 7-րդ մասով հետևյալ բովանդակությամբ «7 Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը տրամադրվում է հայերեն, իսկ հարկ վճարողի կողմից պահանջվելու դեպքում՝ նաև անգլերեն և ռուսերեն:»: Առաջարկը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը հարկ վճարողի կողմից պահանջվելու դեպքում՝ նաև անգլերեն և ռուսերեն տրամադրելու հանգամանքով:	<i>Ընդունվել է:</i> Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	<i>Ընդունվել է:</i>
9.	Կառավարություն	6-րդ (փոփոխված 7-րդ) հոդված	Առաջարկվում է նախագծի 6-րդ (փոփոխված 7-րդ) հոդվածի վերնագիրը հանել:	<i>Ընդունվել է:</i> Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	<i>Ընդունվել է:</i>

			Առաջարկը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջով, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:		
10.	Կառավարություն	6-րդ (փոփոխված 7-րդ) հոդված	Առաջարկվում է նախագծի 6-րդ (փոփոխված 7-րդ) հոդվածի 1-ին մասից հանել «, եթե սույն հոդվածով այլ բան նախատեսված չէ» բառերը: Առաջարկը խմբագրական բնույթ է կրում:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
11.	Կառավարություն	6-րդ (փոփոխված 7-րդ) հոդված	Առաջարկվում է նախագծի 6-րդ (փոփոխված 7-րդ) հոդվածի 2-րդ մասում «3-րդ և 4-րդ» բառերը փոխարինել «3-րդ, 4-րդ և 5-րդ» բառերով: Առաջարկը պայմանավորված է նախագծում լրացվող նոր հոդվածով և դրանով պայմանավորված հոդվածների հաջորդականության փոփոխությամբ:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
12.	Կառավարություն	6-րդ (փոփոխված 7-րդ) հոդված	Առաջարկվում է նախագծի 6-րդ (փոփոխված 7-րդ) հոդվածի 2-րդ մասից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը: Առաջարկը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
13.	Կառավարություն	6-րդ (փոփոխված 7-րդ) հոդված	Առաջարկվում է նախագծի 6-րդ (փոփոխված 7-րդ) հոդվածի 3-րդ մասը շարադրելով հետևյալ խմբագրությամբ «3. Սույն օրենքի 6-րդ հոդվածը տարածվում է 2025 թվականի դեկտեմբերի 1-ից հետո Հայաստանի	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների տրամադրման գործընթացի վրա: Մինչև 2025 թվականի դեկտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների տրամադրման մասով կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Օրենսգրքով սահմանված կարգավորումները:»: Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների էլեկտրոնային եղանակով տրամադրման ժամկետների վերանայման առաջարկը՝ այդ թվում ֆիզիկական անձանց մասով ժամկետի վերանայումը, պայմանավորված է ՀՀ ռեզիդենտի կարգավիճակի հաստատման մասին տեղեկանքների ավտոմատացման համակարգի ծրագրավորման աշխատանքների իրականացման ավարտի հետ:		
--	--	--	---	--	--